ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2019թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

<<ԱՆՏԻՖԵՅՔ.ԱՄ>> ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ
ԽՄԲԱԳԻՐ ՏԻԿԻՆ ԱՍՏՂԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մաթևոսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2019 թվական դեկտեմբերի 3-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 7426) Ձեր հարցման՝ ներկայացնում ենք պահանջվող տեղեկատվությունն ըստ կետերի:

1. 2019թ. փետրվար ամսից մինչև 2019թ. դեկտեմբերի 6-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմը՝ մարզպետի գրասենյակի աշխատակիցները, քաղաքացիական ծառայողները, քաղաքացիական աշխատանք կատարող անձինք, ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատող անձինք և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները, պարգևատրվել են ութ անգամ:

Պարգևատրման համար հիմք են հանդիսացել <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 22-րդ հոդվածները:

2. Պարգևատրված աշխատողների ցուցակն ըստ զբաղեցրած պաշտոնի և ստացած պարգևատրումների չափի չենք կարող տրամադրել, քանի որ կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: Համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,

<<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության, չեն կարող տրամադրվել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95